<<ՄՈՒԼՏԻ ՏՐԱՆՍՊՈՐՏ>>

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2025թ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

ԵՐԵՎԱՆ
2026

Բովանդակություն

	Էջ
Անկախ աւդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	8
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	9
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	10
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ԱՅՖԱՐԵՍ ՔՈՆՍԱԼԹ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

REPUBLIC OF ARMENIA
« IFRS CONSULT »
LIMITID LIABILITY
COMPANY

/Հայաստանի Աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ /ՀՊ խորհրդի 16.12.2025թ-ի Թիվ 76-Ա որոշման ռեեստրում գրանցման ամսաթիվը՝ 16.12.2025թ, հիմնական գրանցման համարը Թիվ /1251016/

ՀՎՀՀ 02936838

ք. Երևան, Արգիշտի 7/4 , բն 12

Անկախ աուդիտորի եզրակացություն

«ՄՈՒԼՏԻ ՏՐԱՆՍՊՈՐՏ» ՍՊԸ մասնակցին

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՄՈՒԼՏԻ ՏՐԱՆՍՊՈՐՏ» ՍՊԸ այսուհետ «Ընկերություն» ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ «Վերապահումով կարծիք»-ի հիմք բաժնում նկարագրված հարցերի ազդեցությունից, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակը, ինչպես նաև նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Փոքր և միջին կազմակերպությունների Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների համաձայն (այսուհետ՝ ՓՄԿ ՖՀՄՍ-ներ):

Վերապահումով կարծիքի հիմք

Մենք հնարավորություն չենք ունեցել հետևելու պաշարների գույքագրման ամբողջական գործընթացին տարվա վերջում և անկարող էինք իրականացնել այլընտրանքային ընթացակարգեր, որպեսզի ինքներս համոզվեինք պաշարների առկայության և քանակի վերաբերյալ 2025թ-դեկտեմբերի 31-ի դրությամբ, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ ներառված են 307386,0 հազ դրամ գումարով: Նշված հարցի արդյունքում, մենք անկարող էինք որոշել արդյոք որևէ ճշգրտում անհրաժեշտ է պաշարների, ինչպես նաև դրա հնարավոր հետևանք կուտակված շահույթի ցուցանիշի, ինչպես նաև տարվա շահույթի գծով ֆինանսական հաշվետվությունների մեջ:

Ընկերությունը ունի մասնակցի շահույթի բաշխում 2025թ առաջին եռամսյակի համար 290000.0 հազ.դրամի չափով: Հաշվի առնելով, որ ընկերությունը 2024թ-ին աշխատել է վնասով, 2025թ առաջին եռամսյակի և 2025թ կանխատեսումներով չէր կարող աշխատել շահույթով, շահույթի բաշխումը՝ 290000.0 հազ.դրամի չափով պետք է չեղարկել, որի արդյունքում կաճի 2025թ սեփական կապիտալը նույն գումարի չափով, կաճեն ակտիվները 275500,0 հազ.դրամի չափով և պարտավորությունները կնվազեն 14500.0 հազ.դրամի չափով:

Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այս ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք ընկերությունից՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջներին համապատասխան համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄԽ կանոնագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները համաձայն այդ կանոնների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի ընկերությունը լուծարելու կամ ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվության աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական , երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացված աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում կասկածամտություն: Ի լրումն մենք նաև՝

-Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք կհանդիսանան աուդիտորի կարծիք արտահայտելու համար: Խարդախության հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերելու ռիսկը ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:

-Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե կազմակերպության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

-Գնահատում ենք կիրառած հաշվապահական հաշվառման սկզբունքների տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

-Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելը, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա գնահատում արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե աուդիտորը եզրահանգում է, որ առկա է էական անորոշություն, ապա պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, իսկ եթե այդ բացահայտումները բավարար չեն, ապա ձևափոխել կարծիքը: Աուդիտորի եզրահանգումները հիմնված են մինչև աուդիտորի եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը

-Երբ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվում են ճշմարիտ ներկայացման հիմունքի համաձայն, գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործառույթների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը

-ի լրումն այլ հարցերի կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդակցում ենք աուդիտորի առաջադրանքների պլանավորած շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի ներառյալ ներքին հսկողության վերաբերող նշանակալի թերությունները:

«ԱՅՖԱՈԵՍ ՔՈՆՍԱԼԹ» ՍՊԸ

Գլխ. տնօրեն՝ Գ. Վարդանյան

Աուդիտի ղեկավար՝ Լ. Շահոյան

Հայաստանի Հանրապետություն,
ք. Երևան, Արգիշտի 7/4 , բն 12
2026թ. հունիսի 29

<<ՄՈՒԼՏԻ ՏՐԱՆՍՊՈՐՏ>> ՍՊԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ

	Ծա-նոթ.	2024թ	2025թ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4.1	3,353,006	3,991,176
Ֆին վարձ. ստացվ. Հիմնական միջոցներ	4.2	740,091	605,529
Կենսաբանական ակտիվներ			
Ներդրումային գույք			
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ			
Ոչ նյութական ակտիվներ			
Բաժնեմասնության մեթոդով հաշվառվող ներդրումներ			
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ			
Հետաձգված հարկային ակտիվներ		3,236	2,866
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		1,327,973	254,208
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		5,424,306	4,853,779
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	4.3	133,826	307,386
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	4.4	164,859	72,385
Ընթացիկ հարկային ակտիվներ շահութահարկի գծով			
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ			
Մնացորդներ բանկերում և դրամարկղում	4.5	1,418,494	39,590
Կարճաժամկետ տրամադրված փոխառություններ			
Այլ ընթացիկ ակտիվներ			
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		1,717,179	419,361
Ընդամենը ակտիվներ		7,141,485	5,273,140

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
(շարունակություն)

Հազար դրամ

	ծանոթ.	2024թ	2025թ
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կանոնադրական (բաժնետիրական) կապիտալ	4.6	50	50
Էմիսիոն եկամուտ			
Վերագնահատման պահուստ			0
Կուտակված շահույթ (վնաս)		411,827	-760,896
Պահուստային կապիտալ			
Սեփական կապիտալի այլ տարրեր			-290,000
Ընդամենը սեփական կապիտալ		411,877	-1,050,846
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	4.7	2,622,545	2,179,684
Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք հաջորդ տարվա գումարներ	4.8	485,667	373,119
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		3,108,212	2,552,803
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	4.9	3,334,779	3,348,175
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	4.10	266,537	407,082
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		2,097	
Պահուստներ այլ պարտավորությունների և ծախսումների գծով	4.11	17,983	15,926
Այլ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ			
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		3,621,396	3,771,183
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		7,141,485	5,273,140

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից՝ 29.06.2026թ. և պետք է ընթերցվեն կից ծանոթագրությունների հետ միասին

Գլխավոր տնօրեն Ա. Դալլաքյան

Գլխ. հաշվապահ՝ Ա. Խառատյան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ

	Ծան որ.	2024թ	2025թ.
Հասույթ	4.12	1,532,690	1,055,927
Վաճառքի ինքնարժեք	4.13	1,469,287	1,610,062
Համախառն շահույթ(վնաս)		63,403	(554,135)
Այլ եկամուտներ	4.14	66,466	308,845
Իրացման ծախսեր	4.15	209	78
Վարչական ծախսեր	4.15	197,381	210,121
Այլ ծախսեր	4.15	134,292	92,065
Գործառնական գործունեությունից շահույթ(վնաս)		(202,013)	(547,554)
Ֆինանսական ծախսեր	4.16	138111	207,328
Շահույթ(վնաս) մինչև հարկելը		(340,124)	(754,882)
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	4.17	1,476	6,295
Տարվա շահույթ(վնաս)		(341,600)	(761,177)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Ընդամենը համապարփակ արդյունք		(341,600)	(761,177)
Մեկ բաժնետոմսին բաժին ընկած բազային շահույթ (վնաս)			
Մեկ բաժնետոմսին բաժին ընկած նոսրացված շահույթ (վնաս)			

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից՝ 29.06.2026թ.և պետք է ընթերցվեն նրա ծանոթագրությունների հետ միասին

Գլխավոր տնօրեն՝ Ա. Դալլաքյան

Գլխ. հաշվապահ՝ Ա. Խառատյան

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ

	Բաժնետիրական կապիտալ	Վերագնահատումից պահուստներ	Պահուստային կապիտալ	Կուտակված շահույթ/(վնաս)	Սեփական կապիտալի այլ տարրեր	Ընդամենը
2023. դեկտեմբերի 31-ի դրությամբ	50			753,427		753,477
Մնացորդի ուղղում						-
Տարվա շահույթ/(վնաս)				(341,600)	-	(341,600)
Բաժնետոմսի թողարկում						-
Ներքին շարժեր						-
Սեփական կապիտալի այլ ավելացումներ և պակասեցումներ						-
Շահաբաժիններ						-
2024 դեկտեմբերի 31-ի դրությամբ	50	-	-	411,827	-	411,877
Մնացորդի ուղղում						-
Տարվա շահույթ/(վնաս)				(761,177)	-	(761,177)
Բաժնետոմսի թողարկում						-
Ներքին շարժեր						-
Այլ ավելացումներ և պակասեցումներ						-
Շահաբաժիններ				(411,546)	(290,000)	(701,546)
2025. դեկտեմբերի 31-ի դրությամբ	50	-	-	(760,896)	(290,000)	(1,050,846)

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից՝ 29.06.2026թ.և պետք է ընթերցվեն կից ծանոթագրությունների հետ միասին

Գլխավոր տնօրեն՝ Ա. Դալլաքյան

Գլխ. հաշվապահ՝ Ա. Խառատյան

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2024թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2025թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեություն		
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	575,319	1,418,494
Իրացումից մուտքեր	1,624,493	1,263,379
Գործառնական այլ գործունեությունից մուտքեր	122,855	490,705
Ընդամենը գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր	1,747,348	1,754,084
Նյութերի, ապրանքների ձեռք բերման գծով ելքեր	660,616	662,884
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով	100,462	181,147
Վճարումներ աշխատակիցներին	302,601	312,443
Վճարումներ բյուջե	333,785	652,895
Վճարումներ շահութահարկի գծով	3,064	
Վճարումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամ	6,453	6,549
Վճարված տուկումներ		
այլ վճարումներ	35,180	710,937
Ընդամենը գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր	1,442,361	2,526,855
Ընդամենը գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	304,987	- 772,771
Ներդրումային գործունեություն		
Ներդրումային այլ գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների վաճառքներից մուտքեր		
Այլ մուտքեր		
Ներդրումային գործունեությունից այլ մուտքեր		
Ընդամենը ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր	0	0
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռքբերումից ելքեր	1,584,550	7,412
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների այլ ելքեր		
Ընդամենը ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքեր	1,584,550	7,412
Ընդամենը ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	- 1,584,550	- 7,412
Ֆինանսական գործունեություն		
Ստացված վարկերից և փոխառություններից մուտքեր	2,714,527	335,000
Ֆինանսական գործունեությունից այլ մուտքեր		
Ընդամենը ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր	2,714,527	335,000
Ստացված վարկերի և փոխառությունների մարումից ելքեր	557,484	934,654
Վճարված շահաբաժիններ, տոկոսներ, այլ ելքեր		
Ընդամենը ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների ելքեր	557,484	934,654
Ընդամենը ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	2,157,043	- 599,654
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	877,480	- 1,379,837
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	- 34,305	933
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	1,418,494	39,590

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից՝ 29.06.2026թ.և պետք է ընթերցվեն նշված ծանոթագրությունների հետ միասին

Գլխավոր տնօրեն Ա. Դալլաքյան

Գլխ. հաշվապահ Ա. Խառատյան

Ծանոթագրություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալից մասերի վերաբերյալ համառոտագրից և այլ բացատրական տեղեկատվությունից

«ՄՈՒԼՏԻ ՏՐԱՆՍՊՈՐՏ» ՍՊԸ
2025. դեկտեմբերի 31-ին
ավարտվող տարվա համար

1. Տեղեկատվություն ընկերության մասին

«ՄՈՒԼՏԻ ՏՐԱՆՍՊՈՐՏ» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն) շահույթ հետապնդող առևտրային կազմակերպություն է, ստեղծվել է 16.09.2021թ.

Ընկերության իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արգիշտի 9

Ընկերության գործունեության հասցեն է՝ ՀՀ, ք.Աբովյան Հանրակացարանային թաղամաս 1/1,1/2,1/7

Ընկերության գործունեության հիմնական ուղղությունն է՝ կանոնավոր ուղևորափոխադրումների իրականացումը Կոտայքի և Արագածոտնի մարզերից

Ընկերության աշխատողների քանակը 2025թ. Դեկտեմբերի վերջին կազմում է 397 մարդ (2024թ. 351-մարդ)

2. Պատրաստման հիմունքները

2.1 Համապատասխանություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված փոքր և միջին կազմակերպությունների Ֆինանսական հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ներ) համապատասխան:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ընկերության ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ով առաջին ֆինանսական հաշվետվություններն են: Ընկերությունը ներկայացրել է իր նախորդող ամենավերջին ֆինանսական հաշվետվությունները ամբողջական ՖՀՄՍ-ին համապատասխան:

ՓՄԿ-ների ՖՀՄՍ –ի անցնելու ամսաթիվը 2024թ հունվարի 1-ն է: Ամբողջական ՖՀՄՍ-ներից ՓՄԿ-ների ՖՀՄՍ անցման հետևանքով որևէ փոփոխություն տեղի չի ունեցել հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ:

Ամբողջական ՖՀՄՍ-ներից ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի անցումը չի ազդել *ընկերության նախորդող ամենավերջին ֆինանսական հաշվետվությունների վրա:*

2.2 Անընդհատության սկզբունք

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքի հիման վրա:

2.3 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

2.4. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն (դրամ) է, որը հանդիսանում է Ընկերության ֆունկցիոնալ արժույթը: Դրամով ներկայված ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է հազարների ճշտությամբ:

2.5. Դատողությունների, գնահատումների և ենթադրությունների կիրառում

Ֆինանսական հաշվետվությունները ՓՄԿ ՖՀՄՄ համապատասխան կազմման համար Ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը, ինչպես նաև պայմանական պարտավորությունների և ակտիվների բացահայտմանը վերաբերող մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

3. Նշանակալի հարցերի նկատմամբ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս նշանակալի հարցերի նկատմամբ կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

Ներկայացման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները կազմված են համաձայն ֆինանսական Փոքր և միջին կազմակերպությունների Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ ՓՄԿ ՖՀՄՄ-ներ) և կիրառվում է սկզբնական արժեքի հիմունքը: Սկզբնական արժեքը ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչման պահին վճարված (վճարվելիք), ստացված (ստացվելիք) դրամական միջոցների չափն է, իսկ ոչ դրամային հատուցման դեպքում՝ հատուցման իրական արժեքը:

Ստորև ներկայացված են հաշվապահական հաշվառման հիմնական քաղաքականությունները.

3.1 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություններում ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են առանձին:

Ակտիվը համարվում է ընթացիկ, երբ

ա) ակնկալվում է այն իրացնել, վաճառել կամ սպառել սովորական գործառնական փուլի ընթացքում,

բ) պահվում է հիմնականում առևտրական նպատակներով,

գ) ակնկալում է այն իրացնել հաշվետու ժամանակաշրջանից հետո տասներկու ամսվա ընթացքում

դ) այն դրամական միջոց է կամ դրամական միջոցների համարժեք, բացառությամբ երբ դրա փոխանակումը կամ օգտագործումը՝ պարտավորություն մարելու նպատակով, սահմանափակված է հաշվետու ժամանակաշրջանից հետո նվազագույնը տասներկու ամիսների ընթացքում:

Բոլոր այլ ակտիվները համարվում են ոչ ընթացիկ:

Պարտավորություններ համարվում է ընթացիկ, երբ

ա) անկնկալվում է այն մարել սովորական գործառնական փուլի ընթացքում,

բ) պահվում է հիմնականում առևտրական նպատակներով,

գ) ենթակա է մարման հաշվետու ժամանակաշրջանից հետո տասներկու ամսվա ընթացքում

դ) կազմակերպությունը չունի անվերապահ իրավունք՝ հետաձգելու մարումը հաշվետու ժամանակաշրջանից հետո նվազագույնը տասներկու ամիս:

Բոլոր այլ պարտավորությունները համարվում են ոչ ընթացիկ:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններում ծախսերը ներկայացվում են ըստ գործառնության դասակարգմամբ:

Տարեկան ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում է միայն մեկ տարվա համադրելի տեղեկատվություն:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը կազմվում և ներկայացվում է ուղղակի մեթոդով:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություններում տոկոսների գծով ներհոսքերն ու արտահոսքերը դասակարգվում են համապատասխանաբար որպես ներդրումային գործունեությունից ներհոսքեր և ֆինանսավորման գործունեությունից արտահոսքեր:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություններում շահաբաժինների գծով ներհոսքերն ու արտահոսքերը դասակարգվում են համապատասխանաբար որպես ներդրումային գործունեությունից ներհոսքեր և ֆինանսավորման գործունեությունից արտահոսքեր:

Ֆինանսական հաշվետվություններում էական տեղեկատվությունը ներկայացվում է առանձին:

3.2 Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքի և իրացման զուտ արժեքից ավազագույնով: Ինքնարժեքը հաշվարկվում առաջին մուտք առաջին ելք բանաձևով և ներառում է ձեռքբերման արժեքը, վերամշակման ծախսումները և այլ ծախսումները, որոնք անհրաժեշտ են պաշարները գտնվելու վայր հասցնելու և վիճակի բերելու համար: Պատրաստի և անավարտ արտադրանքի ինքնարժեքում ներառվում են նաև արտադրական վերադիր ծախսումները՝ հիմնվելով արտադրական նորմատիվային ցուցանիշների վրա: Արտադրական նորմատիվները հաստատվում են տնօրինության կողմից և ենթակա են պարբերական վերանայման:

Իրացման զուտ արժեքը դա սովորական գործունեության ընթացքում հնարավոր վաճառքի գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները:

Կազմակերպությունում արտադրանքը թողարկվում է շարունակական հիմունքով մեծ քանակությամբ, ուստի փոխառության ծախսումները չեն կապիտալացվում:

Պաշարների նյութեր բաժնում ներառվում են նաև այն ակտիվները, որոնց ծառայության ժամկետը չի գերազանցում մեկ տարին՝ անկախ դրանց արժեքից: Դրանք են պահեստամասերը, ապասարկող սարքավորումները, գործիքները և հարմարանքները, արտադրական և տնտեսական գույքը, ժամանակավոր կառույցները, հատուկ հագուստը և կոշկեղենը, անկողնային պարագաները, ճաշարանային սպասքը և այլն: Այս ակտիվները ապաճանաչվում են դրանց շահագործումը սկսելու պահին:

3.3. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների բոլոր դասերը հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է հիմնական միջոցի միավորի ձեռքբերմանը կամ կառուցմանը վերաբերող բոլոր այն ծախսումները, որոնք անհրաժեշտ են այն աշխատանքային վիճակի բերելու համար: Սկզբնական արժեքը իր մեջ կարող է ներառել նաև փոխառության ծախսումները (տես փոխառության ծախսումներ բաժինը), ինչպես նաև ապատեղակայման, քանդման, և տեղանքի վերականգնման գնահատված ծախսումների գումարը (տես պահուստներ բաժինը), ինչպես նաև ներկրման տուրքերը և չփոխհատուցվող հարկերը:

Հիմնական միջոցների հետագա ծախսումները՝ ներառյալ նշանակալի մասերի փոխարինման արժեքը ավելացվում են ճանաչված հիմնական միջոցի արժեքին, եթե հավանական է դրա գծով ապագա տնտեսական օգուտների ներհոսք և արժեքը հնարավոր է արժանահավատորեն չափել: Փոխարինված մասերի հաշվեկշռային արժեքը ապաճանաչվում է: Ամենօրյա սպասարկման ծախսումները՝ ներառյալ մանր դետալների ծախսումները ճանաչվում են ընթացիկ ժամանակաշրջանի ծախս:

Հողամասը և շենքերը առանձին ակտիվներ են դիտարկվում և հաշվառվում են առանձին-առանձին, նույնիսկ երբ դրանք ձեռք են բերվում միասին:

Հիմնական միջոցների մնացորդային արժեքը որոշվում է որպես այն գումարը, որով հնարավոր կլիներ վաճառել ակտիվը տվյալ պահին, եթե լիներ այն տարիքի և վիճակի, որն ակնկալվում էր, որ կլիներ դրա օգտակար ծառայության վերջում:

Այն դեպքերում, երբ ակտիվը օգտակար ծառայության վերջում որպես թափոն չունի զգալի արժեք, և գնահատված օգտակար ծառայության ժամկետը գերազանցում է մնացած տնտեսական ծառայության ժամկետի 80%-ը, ապա մնացորդային արժեքը գնահատվում է 0:

Մաշվածության մեթոդը արտացոլում է այն մոդելը, որով կազմակերպությունը ակնկալում է սպառել ակտիվի տնտեսական օգուտները: Եթե գնահատման պահին տնտեսական օգուտների անհավասարաչափ սպառումը բացահայտ չէ, ապա մաշվածության հաշվարկման համար օգտագործվում է ուղիղ գծային մեթոդը: Առանձին բաղադրիչների համար կարող է հաշվարկվել առանձին մաշվածություն:

Յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում կազմակերպության տնօրենի հրամանով ստեղծված հանձնաժողովների կողմից վերանայվում են հիմնական միջոցների մնացած օգտակար ծառայության ժամկետները, մնացորդային արժեքները և մաշվածության հաշվառման մեթոդները:

Հիմնական միջոցների օգտակար ծառայությունները որոշելու համար կազմակերպությունն առաջնորդվում է ըստ դասերի հետևյալ ուղեցույցերով.

- Շենքեր շինություններ 20 տարի,
- Մեքենա-սարքավորումներ 1-5 տարի,
- Բեռնատար ավտոմեքենաներ 1- 8 տարի,

- Մարդատար ավտոմեքենաներ 1- 8 տարի,
- Տնտեսական և գրասենյակային գույք 1-8 տարի,
- Համակարգչային տեխնիկա 1 տարի

3.4. Ներդրումային գույք

Ներդրումային գույք է համարվում այն գույքը (հող կամ շինություն), որը պահվում է վարձակալությունից և/կամ դրա արժեքի աճից եկամուտ վաստակելու նպատակով: Ներդրումային գույքը սկզբունքորեն չամիվում և հաշվառվում է սկզբնական արժեքից հանած կուտակված մաշվածություն և արժեզրկումից կուտակված կորուստներ:

3.5. Ոչ նյութական ակտիվներ

Առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվներն ունեն որոշակի օգտակար ծառայության ժամկետ և հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները:

Ձեռնարկատիրական գործունեության միավորմամբ ձեռքբերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ձեռնարկատիրական գործունեության ձեռքբերման օրվա իրական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները:

Ներստեղծված ոչ նյութական ակտիվների գծով կատարված հետազոտության ծախսումները՝ նրանք, որոնք կատարվում են նոր գիտական կամ տեխնիկական գիտելիքներ և իմացություն ձեռքբերելու ակընկալիքով, ճանաչվում են որպես ընթացիկ ժամանակաշրջանի ծախս:

Ներստեղծված ոչ նյութական ակտիվների գծով կատարված մշակման ծախսումները՝ նրանք, որոնք կատարվում են նոր կամ էականորեն բարելավված նյութերի, սարքավորումների, արտադրատեսակների, գործընթացների, համակարգերի կամ ծառայությունների ստեղծումը պլանավորելու և նախագծելու համար, ճանաչվում են որպես ոչ նյութական ակտիվ միայն այն դեպքում երբ.

- ծախսումները հնարավոր է արժանահավատորեն չափել,
- առկա է ակտիվը ավարտուն վիճակի հասցնելու, օգտագործելու կամ վաճառելու տեխնիկական իրագործելիությունը, ղեկավարության մտադրությունն ու կարողությունը,
- ապահովված է մշակումն ավարտելու համար անհրաժեշտ ռեսուրսների առկայությունը,
- հնարավոր է ցուցադրել այն, թե ինչպես է ոչ նյութական ակտիվը ստեղծելու ապագա տնտեսական օգուտներ:

Մնացած մշակման ծախսումները ճանաչվում են որպես ժամանակաշրջանի ծախս:

Ամորտիզացիան հաշվառվում է գնահատված օգտակար ծառայության ընթացքում ուղիղ գծային մեթոդով, եթե տնտեսական օգուտների անհավասարաչափ ապառումը բացահայտ չէ: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետները որոշվում են ղեկավարության կողմից կատարված կանխատեսումների և ֆինանսական պլանավորման հիման վրա: Օգտակար ծառայությունն ու ամորտիզացիոն մեթոդը վերանայվում են յուրաքանչյուր տարվա վերջում:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետները 3 – 10 տարի են:

3.6. Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների զծով կատարվում է վերլուծություն արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Արժեզրկման հայտանիշի առկայության դեպքում գնահատվում է այդ ակտիվի փոխհատուցվող գումարը, որը որոշվում է որպես իրական արժեքից (հանած վաճառքի անհրաժեշտ ծախսերը) և օգտագործման արժեքից առավելագույնը:

Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների ապագա հոսքերը հաշվարկվում են ներկա արժեքով՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժնքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը, որը սովորաբար կազմակերպության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքն է:

Երբ առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը հնարավոր չէ որոշել, ապա փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Կորպորատիվ ակտիվները բաշխվում են առանձին դրամաստեղծ միավորներին խելամիտ և հետևողական բաշխման հիմունքով, որը սովորաբար հաշվեկշռային արժեքների համամասնությունն է:

Անորոշ ժամկետով ոչ նյութական ակտիվների, անավարտ ոչ նյութական ակտիվների և գուդվիլի արժեզրկումը ստուգվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին:

Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է դրա փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները:
Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

3.7. Արտաժույթ

Կազմակերպության գործունեության ֆունկցիոնալ արժույթ է համարվում ՀՀ դրամը, քանի որ գործունեությունը հիմնականում ծավալվում է ՀՀ տարածքում: ՀՀ դրամն է հանդիսանում նաև կազմակերպության ներկայացման արժույթը:

Արտարժույթով գործառնությունները սկզբնական ճանաչման պահին չափվում են ճանաչման պահի սփոթ փոխանակման փոխարժեքով: Հետագա հաշվետու ժամանակաշրջանների վերջի դրությամբ դրամային հոդվածների մնացորդները վերահաշվարկվում են հաշվետու ամսաթվի սփոթ փոխանակման փոխարժեքով: Առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են որպես շահույթ կամ վնաս ֆինանսական արդյունքներում:

Արտարժույթով գործարքների և՛ սկզբնական ճանաչման համար և՛ հետագա վերաչափման համար կիրառվող սփոթ փոխարժեք է համարվում ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված տվյալ օրվա հաշվարկային փոխարժեքը:

3.8. Փոխառության ծախսումներ

Փոխառության ծախսումները, որոնք անմիջականորեն վերագրելի են որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը, կազմում են այդ ակտիվի արժեքի մաս: Այլ փոխառության ծախսումները ճանաչվում են որպես ծախս:

Այն ակտիվն է համարվում որակավորվող, որին անհրաժեշտ է զգալի ժամանակահատված (սովորաբար 6 ամսից ոչ պակաս) որպեսզի այն պատրաստ լինի ըստ նշանակության օգտագործման կամ վաճառքի համար:

Փոխառության ծախսումները կարող են չկապիտալացվել, երբ շարունակական հիմունքով արտադրվող պաշարների անկախ արտադրական պրոցեսի տեղեկությունից և կենսաբանական ակտիվի հետ են կապված:

Կապիտալացվող փոխառության ծախսումները նվազեցվում են բացառապես որակավորվող ակտիվ ձեռքբերելու նպատակով ստացված փոխառու միջոցների ժամանակավոր ներդրումներից ստացված եկամուտների չափով:

3.9. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցների և դրանց համարժեքների բաղկացուցիչներ են համարվում դրամական միջոցները դրամարկղում, դրամական միջոցները ճանապարհին, ցպահանջ հաշիվների մնացորդները, մինչև 3 ամիս մարման ժամկետով հեշտ իրացվելի և ցածր ռիսկային ֆինանսական ներդրումների մնացորդները, ինչպես նաև բանկային օվերդրաֆտները: Վերջիններիս մնացորդները արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ընթացիկ պարտավորություններ բաժնում:

3.10 Վարձակալություն

ա) Գործառնական վարձակալություն – երբ չեն փոխանցվում սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն և հատույցները: Գործառնական վարձակալության դեպքում վարձավճարների ընդհանուր գումարը ճանաչվում է գծային մեթոդով ծախս ֆինանսական արդյունքների մեջ:

բ) Ֆինանսական Վարձակալության ժամանակ փոխանցվում են սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն և հատույցները :

Սկզբնապես ճանաչվում է ակտիվ՝ իրական արժեքով և նվազագույն՝ վարձավճարների ներկա արժեքով, եթե այն փոքր է իրական արժեքից:

Վարձակալության ժամկետ է համարվում այն ժամանակահատվածը, որի համար հիմնված է Վարձակալության պայմանագիրը, որի համար այն չի կարող չեղյալ հայտարարվել, գումարած այն ժամանակահատվածը որով Վարձակալը կարող է երկարացնել այդ վարձակալումը այն դեպքում, երբ առկա է բավականաչափ համոզմունք վարձակալման ժամկետի սկզբում, որ Վարձակալը կարող է օգտվել այդ իրավունքից:

Ընկերությունը Վարձակալության պայմանագրերը դիտարկել են որպես Գործառնական վարձակալություն, քանի որ չի նախատեսում սեփականության իրավունքից ծագող էական ռիսկերի և հատույցների փոխանցում վարձակալին:

Ընկերությունը հանդիսանում է վարձատու՝.
Ընկերությունը վարձակալությունից եկամուտ ճանաչում է գծային հիմունքով համապատասխան վարձակալության ժամկետում:

Հաստույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով: Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաստույթը ներկայացվում է զեղչերի, հետ վերադարձի և քանակային զիջումների ազդեցության ճշգրտված գումարով:

Վաճառքից հասույթը ճանաչվում է այն պահին, երբ փոխանցվում են սեփականության հետ կապված նշանակալի ռիսկերն ու հատույցները, ակընկալվում է տնտեսական օգուտների ներհոսք, ծախսումները հնարավոր է արժանահավատորեն չափել, չի պահպանվում վերահսկողություն ապրանքների նկատմամբ և հասույթի գումարը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Ռիսկերն ու հատույցները համարվում են փոխանցված այն պահին, երբ ապրանքները ստացվում են հաճախորդի կողմից: Այնուամենայնիվ արտահանումների դեպքում ռիսկերն ու հատույցները փոխանցվում են այն պահին, երբ ապրանքները փոխանցվում են տրանսպորտային կազմակերպությանը, քանի որ սովորաբար այդ ապրանքները ենթակա չեն հետ վերադարձման: Առանձին գործարքներում կարող են սահմանվել հատուկ արտոնյալ պայմաններ, որոնց պատճառով ռիսկերի և հատույցների փոխանցման պահը հետաձգվի:

Այն դեպքերում, երբ հատուցման անվանական արժեքը գերազանցում է սովորաբար առաջարկվող վաճառքի գինը, ապա պայմանական տոկոսադրույք է համարվում այն դրույքը, որը ճշտում է ապագա վճարումների գումարը՝ հասցնելով վաճառքի ընթացիկ գնին:

Այն դեպքերում, երբ հատուցման անվանական արժեքը չի գերազանցում սովորաբար առաջարկվող վաճառքի գինը, ապա պայմանական տոկոսադրույք է համարվում նմանատիպ պայմաններով ֆինանսական գործիքի գերակշռող եկամտաբերության դրույքը:

Մինչև 12 ամիս վճարման ժամկետով իրացումների դեպքում տոկոսների հաշվարկ չի կատարվում և հասույթը ճանաչվում է հատուցման անվանական արժեքով:

Ծառայությունների մատուցումից հասույթը ճանաչվում է հաշվետու ամսաթվի դրությամբ ավարտվածության աստիճանի հիմունքով: Այն դեպքերում, երբ ավարտվածության աստիճանը հնարավոր չէ չափել, հասույթը ճանաչվում է միայն կատարված այն ծախսումների չափով, որոնք կփոխհատուցվեն:

Այն դեպքերում, երբ դա հնարավոր է ավարտվածության աստիճանը որոշվում է կատարված ծախսումների և գործարքի գնահատված ընդհանուր ծախսումների հարաբերակցությամբ: Մնացած դեպքերում ավարտվածության աստիճանը որոշվում է տվյալ ամսաթվի դրությամբ կատարված աշխատանքների ուսումնասիրությամբ:

3.12. Պետական շնորհներ

Պետական շնորհները ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ՝ ներկայացվելով ֆինանսական վիճակի մասին հաշվետվության պարտավորություններ բաժնում, այն պահին, երբ կա բավարար հավաստիացում, որ կազմակերպությունը ստանալու է շնորհը և բավարարելու է դրան կից պայմանները:

Այն շնորհները, որոնց հիմնական պայմանն է գնել, կառուցել կամ այլ կերպ ձեռքբերել երկարաժամկետ ակտիվ (ակտիվներին վերաբերող շնորհներ), սկզբնապես ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ, իսկ հետագայում ճանաչվում են շահույթ/վնասում ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

Այլ պետական շնորհները (եկամուտներին վերաբերող շնորհներ) սկզբնապես ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ, իսկ հետագայում ճանաչվում են շահույթ/վնասում սիստեմատիկ հիմունքով՝ համապատասխան այն ծախսումների ծախս ճանաչմանը, որոնց փոխհատուցման համար նախատեսված են:

Պետական շնորհները, որոնք տրամադրվում են ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որի նպատակն է տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն, պետք է ճանաչվեն շահույթ/վնասում այն պահին, երբ դառնում են ստացման ենթակա:

3.13. Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ

Ճանաչում
Պահուստը ճանաչվում է, երբ՝
ա)ընկերությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական)՝ որպես անցյալ դեպքերի արդյունք.
բ)հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ.

գ)պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Պայմանական պարտավորությունը և պայմանական ակտիվը չեն ճանաչվում:
Չափում

Որպես պահուստ ճանաչված գումարը իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներկա պարտականությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատականը:

Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը իրենից ներկայացնում է այն ծախսումների ներկա արժեքը, որոնք ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Զեղչման դրույքը (կամ դրույքները) պետք է լինի այն դրույքը (կամ դրույքները)՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները: Զեղչման դրույքը չպետք է արտացոլի այն ռիսկերը, որոնց գծով դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատումներն արդեն ճշգրտվել են:
Պահուստը պետք է օգտագործվի միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

3.14. Էական սխալներ

Էական սխալներ՝ ընթացիկ ժամանակաշրջանում բացահայտված սխալներ են, որոնք այնպիսի նշանակություն ունեն, որ նախորդ մեկ կամ ավելի ժամանակշրջանների ֆինանսական հաշվետվությունները չեն կարող այլևս արժանահավատ համարվել, իրենց ներկայացման թվի դրությամբ:
Ընկերությունը ուղղում է նախորդող ժամանակաշրջանի էական սխալները հետընթաց վերահաշվարկելով նախորդող ժամանակաշրջանի համեմատելի գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը:

3.15. Ֆինանսական գործիքներ

Հիմնական ֆինանսական գործիքներ են հանդիսանում.

- *Դրամական միջոցներ*
- Փոխառություններ առևտրային և այլ դեբիտորական պարտքեր
- Փոխառություններ առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

1. Դրամական միջոցներ.

Դրամական միջոցները ներառում են կանխիկ միջոցներ, բանկային հաշվի մնացորդներ:

2. Փոխառություններ, առևտրային և այլ դեբիտորական պարտքեր.

Փոխառությունները, դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշակի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք գնահատվող չեն ակտիվ շուկայում:

Փոխառությունները սկզբնապես ճանաչվում են անվանական արժեքով, հետագայում ամորտիզացիոն արժեքով:

Դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են գործարքի գնով հետո հաշվառվում են ամորտիզացիոն արժեքով:

Դեբիտորական պարտքերի գծով ստեղծվում է արժեզրկման պահուստ, որը կարող է չստեղծվել եթե ընկերությունը սահմանված ժամկետներում կարողանում է հավաքագրել իր պարտքերը:

3. Փոխառություններ և այլ կրեդիտորական պարտքերը.

- Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են սկզբնական արժեքով, հետո հաշվառվում է ամորտիզացիոն արժեքով:
- Փոխառությունները սկզբնապես հաշվառվում են անվանական արժեքով, հետո հաշվառվում են ամորտիզացիոն արժեքով:

4. Ֆինանսական ակտիվների արժեզրկում.

Եթե յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ առկա է ֆինանսական ակտիվի՝ ինքնարժեքով կամ ամորտիզացիոն արժեքով, արժեզրկված լինելու անկողմնակալ վկայություն, ընկերությունը պետք է ճանաչի արժեզրկումից կորուստ, որը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում:

4.Բացահայտումներ էական հոդվածների վերաբերյալ

4.1 Հիմնական միջոցներ

000 դրամ

	Հողամասեր	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Շահագործման համար ոչ մատչելի ՀՄ-ներ	Ընդամենը
Սկզբնական արժեք						
Առ 31 դեկտեմբերի 2023թ		3,004	3,577,996	3,571	94,856	3,679,427
Ավելացումներ այդ թվում		790	487,522	0		488,312
Վերագնահատումից						0
Նվազեցումներ			400			400
Առ 31 դեկտեմբերի 2024թ	0	3,794	4,065,118	3,571	94,856	4,167,339
Ավելացումներ այդ թվում		1,286	1,165,896	1,417		1,168,599
Վերագնահատումից						0
Նվազեցումներ						0
Առ 31 դեկտեմբերի 2025թ	0	5,080	5,231,014	4,988	94,856	5,335,938
Կուտակված մաշվածություն						
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	0	2,579	425,905	148		428,632
Տարվա մաշվածությունը այդ թվում		584	384373	744		385,701
Վերագնահատումից						0
Նվազեցումներ						0
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	0	3,163	810,278	892	0	814,333
Տարվա մաշվածությունը այդ թվում		1,156	528,437	836		530,429
Վերագնահատումից						0
Նվազեցումներ						0
Առ 31 դեկտեմբերի 2025թ.	39,905	4,319	1,338,715	1,728	0	1,384,667
Զուտ հաշվեկշռային արժեք						
Առ 31 դեկտեմբեր 2024թ.	0	631	3,254,840	2,679	94,856	3,353,006
Առ 31 դեկտեմբեր 2025թ.	0	761	3,892,299	3,260	94,856	3,991,176

Հիմնական միջոցների մաշվածության գծով ծախսերը բաշխվել են

	2024	2025
Ծառայության մատուցման ինքնարժեք	384,826	527,997
Իրացման ծախսեր		
Վարչական ծախսեր	875	2,432
Գործառնական այլ ծախսեր		
Պաշարների ինքնարժեքում ներառված		
Շահագործման համար ոչ մատչելի ՀՄ-ներ		
Ընդամենը	385701	530429

Հիմնական միջոցների ավելացումները կապված են

1 Մեքենա և սարքավորումների հետ կապված 1.286 հազար դրամ
2 Տրանսպորտային միջոցների ձեռք բերման հետ 1.165.896 հազար դրամ

4.2 Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ

Սկզբնական արժեք	
Առ 31 դեկտեմբերի 2023թ	1,076,496
Ավելացումներ այդ թվում	
Նվազեցումներ	
Առ 31 դեկտեմբերի 2024թ	1,076,496
Ավելացումներ այդ թվում	
Նվազեցումներ	
Առ 31 դեկտեմբերի 2025թ	1,076,496
Կուտակված մաշվածություն	
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	201,843
Տարվա մաշվածությունը այդ թվում	134,562
Նվազեցումներ	
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	336,405
Տարվա մաշվածությունը այդ թվում	134,562
Նվազեցումներ	
Առ 31 դեկտեմբերի 2025թ.	470,967
Զուտ հաշվեկշռային արժեք	
Առ 31 դեկտեմբեր 2024թ.	740,091
Առ 31 դեկտեմբեր 2025թ.	605,529

4.3 Պաշարներ

	31.12.2024թ.	31.12.2025թ.
Հումք և նյութեր	133,826	307,386
Կենսաբանական ակտիվներ		
Անավարտ արտադրանք		
Պատրաստի արտադրանք		
Ապրանք		
Ընդամենը	133,826	307,386

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի գրավադրված պաշարներ:

	2024	2025
Տարվա ընթացքում ծախս ճանաչված պաշարների արժեքը կազմում է	543,389	558,060

4.4 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

000 դրամ

	31.12.24թ.	31.12.25թ.
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր, այդ թվում	164,859	72,385
1. Տրված կանխավճարներ	95,915	60,798
2. Առևտրային դեբիտորական պարտքեր վաճառքների գծով		
3. Դեբիտորական պարտքեր մատուցված ծառայությունների գծով	2,403	4,399
4. Առևտրային դեբիտորական պարտքեր ասոցացված կազմակերպությունների գծով		
5. Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով, այդ թվում	66,541	6,406
• ԱԱԾ	1,327	932
• *Եկամտահարկ*		1,678
• *Գույքահարկ*	110	2,527
• *Հողի հարկ*		
•*Այլ պարտադիր վճար*	65,104	1,269
6. Այլ դեբիտորական պարտքեր		782

Առևտրային դեբիտորական պարտքերը կարճաժամկետ են չեն պարունակում ֆինանսավորման նշանակալի բաղադրիչ և չափվում են գործարքի գնով:

Առևտրային դեբիտորական պարտքերը 31.12.2025թ-ի դրությամբ արժեզրկման պահուստ չի ստեղծվել, քանի-որ պայմանագրային կողմ հանդիսացող գործընկերները ժամանակին մարում են իրենց պարտքերը և ղեկավարության համոզմամբ, ընկերությունը չի կարող ունենալ ֆինանսական կորուստներ:

4. 5 Դրամական միջոցների և դրանց համարժեքներ

000 դրամ

	31.12.24թ.	31.12.25թ.
Դրամարկղ	732,956	31,504
Բանկային հաշիվներ	685,538	8,086
Ընդամենը	1,418,494	39,590

4.6.Սեփական կապիտալ

4.6.1 Կանոնադրական (բաժնետիրական) կապիտալի զուտ գումարը

4.6.1.1 Հայտարարված և վճարված կանոնադրական կապիտալը

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 50.0 հազ. Դրամ: 50 բաժնեմաս յուրաքանչյուրը 1000.0 դրամ:

4.6.2 Հաշվարկվել և վճարվել է 411,546 հազ. դրամի շահաբաժին, ինչպես նաև 290,000 հազ. դրամի չափով 2025թ. համար միջանկյալ շահաբաժին:

4.6.3 Էմիսիոն եկամուտ չկա

4.6.4 Պահուստային կապիտալ չկա

4.7. Երկարաժամկետ վարկեր և փոխառություններ

4.7.1. Երկարաժամկետ վարկեր

000դրամ

	31.12.24թ.		31.12.25թ.	
	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա
Մնացորդը տարեսկզբին	974,513	974,513	2,622,545	2,622,545
Ստացվել է տարվա ընթացքում	1,817,071	1,817,071		0
Մարվել է տարվա ընթացքում	169,039	169,039	442,861	442,861
Մնացորդը տարեվերջին	2,622,545	2,622,545	2,179,684	2,179,684

4.7.2. Երկարաժամկետ փոխառություններ

000դրամ

	31.12.24թ.		31.12.25թ.	
	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա
Մնացորդը տարեսկզբին			0	0
Ստացվել է տարվա ընթացքում				
Մարվել է տարվա ընթացքում				
Մնացորդը տարեվերջին	0	0	0	0

4.8 Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ

	31.12.24թ.		31.12.25թ.	
	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա
Մնացորդը տարեսկզբին	587,686	587,686	485,667	485,667
Ստացվել է տարվա ընթացքում				
Մարվել է տարվա ընթացքում	102019	102019	112,548	112,548
Մնացորդը տարեվերջին	485,667	485,667	373,119	373,119

4.9. Կարճաժամկետ վարկեր և փոխառություններ

4.9.1. Կարճաժամկետ վարկեր

000դրամ

	31.12.24թ.		31.12.25թ.	
	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա
Մնացորդը տարեսկզբին			0	0
Ստացվել է տարվա ընթացքում				0
Մարվել է տարվա ընթացքում				0
Մնացորդը տարեվերջին	0	0	0	0

4.9.2. Կարճաժամկետ փոխառություններ

000դրամ

	31.12.24թ.		31.12.25թ.	
	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա
Մնացորդը տարեսկզբին	2,561,960	2,561,960	3,334,779	3,334,779
Ստացվել է տարվա ընթացքում	922,565	922,565	335,000	335,000
Մարվել է տարվա ընթացքում	149,746	149,746	321,604	321,604
Մնացորդը տարեվերջին	3,334,779	3,334,779	3,348,175	3,348,175

4.10 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

000 դրամ

	31.12.24թ.	31.12.25թ.
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր, այդ թվում	**266,537**	**407,082**
1. Ստացված կանխավճարներ		
2. Առևտրային կրեդիտորական պարտքեր գնումների գծով	188,961	338,155
3. Առևտրային կրեդիտորական պարտքեր ստացված ծառայությունների գծով	24,776	34,367
4. Առևտրային կրեդիտորական պարտքեր պարտքեր այլ կապակցված կազմակերպությունների գծով		
5. Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով, այդ թվում	3,792	8,403
• ԱԱԳ	229	
• Եկամտահարկ	2,710	6,604
• Ակցիզային հարկ		
• Գույքահարկ		
• Հողի հարկ		
•Այլ պարտադիր վճար	853	1,799
6. Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	48,341	25,459
7. Կրեդիտորական պարտքեր պարտադիր սոց.ապ.գծով	667	698
8. Այլ կրեդիտորական պարտքեր		

Առևտրային կրեդիտորական պարտքերը կարճաժամկետ են

չեն պարունակում ֆինանսավորման նշանակալի բաղադրիչ և չափվում են գործարքի գնով:

Ընկերությունը ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարումը:

4.11. Պահուստ

000 դրամ

	31.12.24թ.	31.12.25թ.
Պահուստ արձակուրդային վճարման գծով	17983	15926

4.12. Հասույթ

000դրամ

	31.12.24թ.	31.12.25թ.
Արտադրանքի իրացում		
Ապրանքի իրացում		
Ծառայությունների մատուցում	1,532,690	1,055,927
Ընդամենը	1,532,690	1,055,927

4.13. Վաճառքի ինքնարժեք

'000դրամ

	31.12.24թ.	31.12.25թ.
Փոխհատուցումներ աշխատակիցներին	333,995	313,395
Մաշվածության ծախս	384,826	527,997
Նյութական ծախսեր	543,390	567,921
Այլ ծախսեր	207,076	200,749
Ընդամենը	1,469,287	1,610,062

4.14 .Այլ եկամուտներ

'000դրամ

	31.12.24թ.	31.12.25թ.
Հիմնական միջոցների օտարումներից օգուտ	416	
Անհատույց տրված ակտիվներից եկամուտ	15,627	64317
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ		
Նյութական վնասի փոխհատուցումից եկամուտ	36,217	19783
Փոխարժեքային տարբերությունից օգուտ		181135
Պարտավորության ներումից եկամուտ		
Հաշվետու տարվա հարկային տույժերի և տուգանքների ներումից եկամուտ		
Ֆինանսական ներդրումից եկամուտներ		
Տույժերի վճարումից եկամուտ		
Դեբիտորական պարտքերի պահուստի հակադարձումից		
Այլ պաշարների օտարումից եկամուտ		
Հիմնական միջոցների վերագնահատումից օգուտ		
Գործառնական վարձակալությունից եկամուտ	500	2179
Տոկոսային եկամուտ	339	176
Կրեդիտորական պարտքերի դուրսգրում		
Այլ եկամուտներ	13,367	41255
Ընդամենը	66,466	308,845

4.15. Վարչական և այլ ծախսեր

000դրամ

	31.12.24թ.	31.12.25թ.
1. Վարչական ծախսեր, այդ թվում՝	197,381	210,121
Փոխհատուցումներ աշխատակիցներին	97,603	128,607
Սոցիալական ապահովագրության վճարներ		
Հիմնական միջոցների մաշվածության, նորոգման և ապաստարկման գծով ծախսեր	875	2,432
Գործուղման , ներկայացուցչական և վերապատրաստման ծախսեր		
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	589	565
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	12,821	20,960
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	3,842	5,043
Բանկային, ապահովագրության, պահպանության և տրանսպորտային ծախսեր	8,434	617
Չփոխհատուցվող ծախսեր հարկերից և տուրքերից	73,217	51,897
Վարչական այլ ծախսեր		
2. Իրացման ծախսեր	209	78
Փոխհատուցումներ աշխատակիցներին		
Պահեստում գտնվող արտադրանքի,ապրանքների փաթեթավորման, տեսակավորման և պահպանման ծախսեր		
Բանկային ծառայությունների ծախսեր, ապահովագրության ծախսեր		
Տրանսպորտային և բեռնափոխադրման ծախսեր		
Հիմնական միջոցների մաշվածության, նորոգման և ապաստարկման գծով ծախսեր		
Գրասենյակային և կոմունալ ծախսեր		
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր		
Մարկետինգի և գովազդի ծախսեր		
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր		
Գործառնական վարձակալությունից ծածսեր		
Այլ իրացման ծախսեր	209	78
3. Գործառնական այլ ծախսեր	28,260	17,828
Կասկածելի դեբիտորական պարտքերի պահուստի ստեղծման ծախսեր		
Պաշարների վաճառքից օգուտներ		
Անհուսալի դեբիտորական պարտքի դուրս գրում		
Պաշարների օտարումից ծախսեր		
Վարձակալության ծախսեր		
Երաշխիքային սպասարկման և վերանորոգման գծով ծախսեր		
Ծախսեր տույժերից, տուգանքներից, դատական ծախսեր	403	17,828
Արժեքների պակասորդներ և փչացումից կորուստներ, խոտանված ապրանքի հետ կապված ծախսեր		
Դորառնական այլ ծախսեր	27,857	
4. Այլ ոչ գործառնական ծախսեր	106,032	74,237
Ակտիվների վերագնահատումից և վերաչափումից ծախս		
Հիմնական միջոցների օտարումից վնաս	400	
Փոխարժեքային տարբերությունից վնաս	90,005	
Այլ ծախսեր	15,627	74,237
Ընդամենը	331,882	302,264

4.16. Ֆինանսական ծախսեր

	31.12.2024	31.12.2025
Ֆինանսական վարձակալության հետ կապված հաշվեգրված տոկոսներ	42,924	34,466
ստացված վարկերի հետ կապված հաշվեգրված տոկոսներ	95,187	172,862
ստացված փոխառությունների հետ կապված հաշվեգրված տոկոսներ		
ընդամենը	138,111	207,328

4.17 Շահութահարկ

4.17.1 Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)

	2024թ Հազ.դրամ	2025թ Հազ.դրամ
Ընթացիկ հարկի գծով	4712	5925
Հետաձգված հարկի գծով ծախս (փոխհատուցում)	(3,236)	370
Ընդամենը	1,476	6,295

4.17.2 Հետաձգված հարկային ակտիվ/պարտավորություն)

	2024թ Հազ.դրամ	2025թ
Տարեսկզբի մնացորդ	0	3,236
Տարվա շարժ	3,236	(370)
տարեվերջի մնացորդ	3,236	2,866

4.17.3 Հետաձգված հարկային ակտիվ(պարտավորության) շարժը տարվա ընթացքուն

2024	Սկզբնական մնացորդ	Ճանաչված շահույթում/ վնասում	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	Վերջնական մնացորդ
Հիմնական միջոցների վերագնահատման գծով				0
Արձակուրդային պահուստի գծով		3,236		3,236
Փոխառությունների գծով				0
հարկային վնաս				0
Ընդամենը	0	3,236		3,236

2025	Սկզբնական մնացորդ	Ճանաչված շահույթում/ վնասում	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	Վերջնական մնացորդ
Հիմնական միջոցների վերագնահատման գծով	0			0
Արձակուրդային պահուստի գծով	3,236	(370)		2,866
Փոխառությունների գծով	0			0
հարկային վնաս	0			0
Ընդամենը		(370)		2,866

4.17.4 Արդյունավետ հարկային դրույքի համադրում

Հաշվետու տարվա համար Հայաստանի Հանրապետության ,,Շահութահարկի մասին,, օրենք համաձայն շահութահարկի դրույքաչափը սահմանված է 18% (2025-18%): Տարվա փաստացի հարկային ծախսերի և Հայաստանում շահութահարկի սահմանված դրույքի (18%) միջև տարբերության մանրամասները ներկայացված են ստորև

Հազ.դրամ

	2024թ Հազ.դրամ	%	2025թ Հազ.դրամ	%
Շահույթ (վնաս) մինչև հարկումը ըստ ՖՀՄՍ-ների	(324,155)		(755,986)	
Շահութահարկի գծով ծախս	(58,348)	18%	(136,077)	18%
Այլ չնվազեցվող ծախսերի (չհարկվող եկամուտների հարկային)հետևանք	59,824	-18%	142372	-19%
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) և հարկի արդյունավետ դրույքը	1,476	0%	6,295	-1%

5.Ֆինանսական գործիքներ

5.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.15-ում:

5.2 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

000դրամ

	31.12.24թ.	31.12.25թ.
Փոխառություններ	-	-
Առևտրային դեբիտորական պարտքեր	2,403	5,181
Մնացորդը դրամարկղում և բանկում	1,418,494	39,590
Այլ ֆինանսական ակտիվներ		
Ընդամենը	1,420,897	44,771

Ֆինանսական պարտավորություններ

000դրամ

	31.12.24թ.	31.12.25թ.
Վարկեր և փոխառություններ	2,622,545	2,179,684
Առևտրային կրեդիտորական պարտքեր	73,784	60,524
Այլ ֆինանսական պարտավորություններ	485,667	373,119
Ընդամենը	3,181,996	2,613,327

Տես՝ ծանոթագրություն 3.15-ը՝ յուրաքանչյուր ֆինանսական գործիքի կատեգորիայի գծով հաշվապահական հաշվառման քաղաքականության նկարագրության համար:

6. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ընկերությունն իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է պալուտքային և իրացվելիության ռիսկերի:

7.Ֆինանսական ռիսկի գործոններ

7.1 Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը ֆինանսական կորուստներ կարող է կրել: Ընկերությունը առևտրային դեբիտորական պարտքերի դիմաց երաշխիքներ չի պահանջում:

7.2 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը վերաբերում է Ընկերության կողմից իր պարտավորությունները ժամանակին մարելուն և անմիջականորեն կապված է Ընկերության դրամական միջոցների հավաքագրման հետ, ինչը նկարագրված է վերը նշված պարտքային ռիսկերում:

8. Իրական արժեք

Իրական արժեքի չափում Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները որոնք չեն չափվում իրենց իրական արժեքով, իրենցից ներկայացնում են առևտրային դեբիտորական պարտքերը, տրված փոխառությունները, դրամական միջոցները, վարկերը և ստացած փոխառությունները, առևտրային և կրեդիտորական պարտքերը: Դրանց գնահատված իրական արժեքները մոտավորապես հավասարվում են հաշվեկշռային արժեքին, հաշվի անելով դրանց կարճաժամկետ բնույթը:

9. Պայմանականություններ

9.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում:

Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով և միջազգային տնտեսական ճգնաժամը:

Հետևաբար, Ընկերության Ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում ճշգրտումների ազդեցությունը, եթե այդպիսիք կան, որոնք կարող էին անհրաժեշտ համարվել, եթե ներկա համաշխարհային ճգնաժամի ազդեցությունը Հայաստանում նկատելի և արժանահավատորեն գնահատելի լիներ:

10. Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը՝ իր ակտիվների և գործունեության ընդհատման արդյունքում հասցված վնասի ապահովագրություն չունի: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական դրության վրա:

11. Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա է են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

Վերոնշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

12. *Իրավական պարտավորություններ*

Առ 31 դեկտեմբերի 2023թ-ի դրությամբ, ինչպես նաև մինչև այս ֆինանսական հաշվետվության հաստատման ժամանակարգերը ընկերությունը ներգրված չէ այնպիսի դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ ընկերության ֆինանսական հաշվարկների վրա:

13. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած դեպքերը

Ի լրումն Ռուսաստանում և տարածաշրջանում քաղաքական և տնտեսական զարգացումների, ղեկավարությունը հետևում է տնտեսական և քաղաքական իրավիճակների ընթացիկ փոփոխություններին, ձեռնարկում է միջոցներ, որոնք անհրաժեշտ են Ընկերության գործունեության կայունությունը և զարգացումը ապահովելու համար: Թեև այս զարգացումների արդյունքը դժվար է կանխատեսել ղեկավարությունը համոզված է, որ Ընկերության գործառնությունները նշանակալի բացասական ազդեցություն չեն ունենա:

12. Իրավական պարտավորություններ

Առ 31 դեկտեմբերի 2025թ-ի դրությամբ, ինչպես նաև մինչև այս ֆինանսական հաշվետվության հաստատման ժամանակարգերը ընկերությունը ներգրված չէ այնպիսի դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ ընկերության ֆինանսական հաշվարկների վրա:

13. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած դեպքերը

Ի լրումն Ռուսաստանում և տարածաշրջանում քաղաքական և տնտեսական զարգացումների, ղեկավարությունը հետևում է տնտեսական և քաղաքական իրավիճակների ընթացիկ փոփոխություններին, ձեռնարկում է միջոցներ, որոնք անհրաժեշտ են Ընկերության գործունեության կայունությունը և զարգացումը ապահովելու համար: Թեև այս զարգացումների արդյունքը դժվար է կանխատեսել ղեկավարությունը համոզված է, որ Ընկերության գործառնությունները նշանակալի բացասական ազդեցություն չեն ունենա:

14. Կապակցված կողմեր և գործարքներ նրանց միջև

Ընկերության կապակցված կողմերը ներառում են.
Ընկերության միակ մասնակից է հանդիսանում՝ ՀՀ քաղաքացի Հայկ Սարգսյանը:

14.1. Ղեկավարության հատուցումները

Ընկերության առանցքային կառավարչական անձնակազմը ստացել է հետևյալ հատուցումները, որոնք ներառված են անձնակազմի գծով ծախսումներում (տես ծանոթագրություն 5).

000դրամ

	31/12/24	31/12/25
	Աշխ.	Աշխ.
Ընդամենը	10,000	14,316

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից՝ 29.06.2026թ.և պետք է ընթերցվեն կից ծանոթագրությունների հետ միասին

Գլխավոր տնօրեն՝ Ա. Դալլաքյան

Գլխ. հաշվապահ՝ Ա. Խառատյան